

ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ ՈՒԽՏԱՆԵՍ ՊԱՏՄԻՉԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐԵՐՅԱԼ

Պատմ. գիտ. քեկնածու Ս. Է. ՔՈԼԱՆՋՅԱՆ

Ուխտանեսն պատմիչը ապրել և ստեղծագործել է X դարում: Նրա մասին մեզ հասած կենսագրական տեղեկությունները շատ ժլատ են. հիմնական աղբյուրը իր իսկ գրած «Պատմութիւնն»¹ է: Ահա այդ երկից էլ գիտենք, որ նա աշակերտել է ժամանակի հայ նշանավոր գիտնական և մանկավարժ Անանիա Նարեկացուն, որի հետ, հավանաբար, ազգակցական կապեր է ունեցել:

Ուխտանեսն իր «Պատմութեան» Ա գլխում, որը մի թուղթ է՝ ուղղված իր մեծ ուսուցիչ Անանիա Նարեկացուն, հանգամանորեն նկարագրում է, թե ինչպես նրանք՝ ուսուցիչ և աշակերտ, նստած Ախուրյան գետի ափին «բերան ի բերան» մտերմիկ զրույց են ունեցել և ուր ուսուցիչը հորդորել է Ուխտանեսնին «Պատմութիւն» գրել: Ապա Անանիա Նարեկացին Ուխտանեսնին ուղղած առանձին թղթով կրկին հիշեցրել է պատմագրքի ստեղծման անհրաժեշտության մասին:

Ուխտանեսնի «Պատմութիւնը» նախապես գրված է եղել երեք մասից: Մեզ հասել են նրա միայն առաջին և երկրորդ (վերջից թերի) մասերը: Առաջին մասը կամ, ինչպես ինքն է անվանում, «Հատվածը» խորագրված է «Պատմութիւն հայրապետաց և թագաւորաց Հայոց» և բաղկացած է 76 գլուխներից: Այն ընդգրկում է սկզբից մինչև Հայաստանում Արշակունիների հարստության հաստատվելն ընկած ժամանակաշրջանը, ներառյալ Տրդատ III-ի թագավորելն ու Հայաստանում քրիստոնեության տարածման պատմությունը: Այս առաջին հատվածի համար իբրև սկզբնաղբյուր օգտագործել է Աստվածաշունչը և իրեն նախորդած հայ պատմիչներին՝ Ագաթանգեղոսին, Զենոբ Գլակին, Մովսես Կաղանկատվացուն և հատկապես՝ Մովսես Խորենացուն: Ուխտանեսնը ձեռքի տակ ունեցել է Շապուհ Բագրատունու այժմ կորած «Պատմութիւնը», օգտվել է Կայսերաց գրքից կամ Անանիա Շիրակացուն վերագրված «Ժամանակագրութիւնից», ինչպես նաև եկեղեցական հայրերի ճառերից, թարգմանական վկայաբանություններից և այլ երկերից: Սակայն ենթադրելի է, որ այս հատվածը ևս չի հասել իր ամբողջությամբ, քանի որ այն կանգ է առնում IV դարի սկզբին և չի հասնում մինչև իր օրերը և կամ գեթ հայ-վրացական հարաբերությունների պատմությանը նվիրված իր երկրորդ հատվածին նախորդող երեք հարյուր տարիների պատմական իրադարձություններին:

Ուխտանեսնի «Պատմութեան» երկրորդ հատվածը խորագրված է «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց» և բաղկացած է 70 գլուխներից: Այն հիմնականում վերաբերում է VI դարի վերջի և VII դարի սկզբի հայ և վրաց եկեղեցիների փոխհարաբերությունների պատմությանը: Այս մասում Ուխտանեսն իր նյութը հիմնականում խարսխել է դիվանական վավերագրերի

¹ Ուխտանեսնի սկիզբնաղբյուր, Պատմութիւն Հայոց (հատուած Ա): Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց (հատուած Բ), Վաղարշապատ, 1871:

միջնադարում, ինչպես հայտնի է, հայ մատենագիրներին կոչում էին իրենց ծննդավայրի և կամ գործած տեղի անունով, և վերջինս հաճախ խաղում էր մի տեսակ աղգանվան դեր (Մովսես Խորենացի, Գրիգոր Նարեկացի և կամ Գրիգոր Արշարունյաց եպիսկոպոս, Հեսու Խորխոռունյաց եպիսկոպոս և այլն)։

Նախ տեսենք, թե ժամանակագրական կարգով մեր պատմիչներին Ռուստանեսը իբրև ուրտեղի եպիսկոպոս կամ թեմակալ է հայտնի եղել։ XIII դարի շուրս պատմիչներ վկայակոչում են Ռուստանեսի պատմագիրը։ Անդրադատնալով Սեբաստիայի Քառասուն մանկանց տոնին, Վարդան Արևելցին մեր պատմիչին հիշատակում է սոսկ Ռուստանես ձևով, գրելով հետևյալը. «Զոր Ռուստանէս տօն կարդեաց՝ որ է սկզբն հանդիսին նոցա և կատարումն ի մարտի ինն»⁶։ Նույն դարի ականավոր մյուս պատմիչը՝ Կիրակոս Գանձակեցին երկու անգամ է հիշատակում Ռուստանեսին. նախ՝ իր օգտագործած աղբյուրներից անկում իբրև Ուռհայի եպիսկոպոս. «Եւ Ռուստանէս եպիսկոպոս Ուռհայի, որ դրեաց զբաժանումն Վրաց ի Հայոց ի ձեռն Կիրիոնի»⁷։ Երկրորդ անգամ հիշատակելիս այլևս չի նշում նրա որտեղի թեմակալ լինելու հանգամանքը, գուցե և չկրկնելու համար իր նախկին ասածը, գրելով միայն՝ «Հայս տմենայն ստուգութեամբ ուսուցանէ քեզ Ռուստանէս եպիսկոպոս...»⁸։ Սակայն, ի հակադրություն Կիրակոս Գանձակեցու հաղորդածի, նույն XIII դարի պատմիչ Մխիթար Այրիվանեցին հայտնում է, որ Ռուստանեսը Սեբաստիայի եպիսկոպոսն էր և միաժամանակ հավաստում, որ նրա «Պատմութեան» երրորդ մասը իր ժամանակ գոյություն է ունեցել. «Եւ ի սոյն աւուրս բաժանեցաւ ի Հայոց աղգն ծաղ ի ձեռն Փառսմանայ ումեմն փառամոլ քահանայի, որպէս պատմէ սուրբն Ռուստանէս եպիսկոպոսն Սեբաստիոյ»⁹։ Նույն Մխիթարը իր «Պատմութիւն Հայոց» երկում երկու անգամ դարձյալ հիշատակում է Ռուստանեսին, սակայն այլևս առանց նշելու, թե նա որտեղի թեմակալն էր։ Մեկ հիշում է նրան իբրև «Ռուստանէս եպիսկոպոս» և մի այլ անգամ էլ՝ իբրև «Ռուստանէս պատմագիր»¹⁰։

Մխիթար Այրիվանեցու տեղեկությանը համահնչյուն է նաև XIII դարի վերջի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հաղորդածը։ Վերջինս գրել է. «Որպէս հաւաստի ուսաք ի սրբոյն Ռուստանիսէ՝ Սեբաստացւոց եպիսկոպոսէ»¹¹, իսկ մի այլ տեղում. «...և թէ ղլիովին և ղերկայնն կամիս լսել՝ ընթերցիր զՌուստանէսն և ղԱղվանից պատմութիւնն և ի Գիր թղթոցն տեղեկացիր, ևս և ղԱռեառն Մաշտոցին, որ ի խնդրոյ Գէորգեայ՝ Հայոց կաթողիկոսի գրեալ է»¹²։

6 «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», (հրատ. Ղ. Ալիշանի), Վենետիկ, 1862, № 42։

7 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ն. Մելիք-Սահյանյանի, Երևան, 1961, էջ 7։ Այստեղ տողատակին բերված են նույն տեղանվան «Ուռհայեցի», «Ուռհայոց» և «Ուռհայու» ձևազրական տարբերակները։

8 Նույն տեղում, էջ 46։

9 Գ. Հովսեփյանց, Մխիթար Այրիվանեցի..., էջ 19։

10 Մխիթար Այրիվանեցու Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1860, էջ 23 և 57։

11 «Պատմութիւն Կահանայի Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սինաց», Թիֆլիս, 1910, էջ 99։

12 Նույն տեղում, էջ 106։

Այսպիսով, XIII դարի մեր շորս ականավոր պատմիչներից մեկը (Վարդան Արեւելցին) ոչինչ չի գրում Ուխտանեսի պաշտոնավարության վայրի մասին, մյուսը (Կիրակոս Գանձակեցին) նշում է, որ նա Ուռհայի եպիսկոպոս է, իսկ վերջին երկուսը (Մխիթար Այրիվանեցին և Ստեփանոս Օրբելյանը) միաբերան վկայում են, որ նա Սեբաստիայի (կամ Սեբաստացվոց) եպիսկոպոսն է եղել:

Հետագա դարերում ևս նույն խառնաշփոթը շարունակում է տիրել: Ոմանք մեր պատմիչին ճանաչում են սոսկ Ուխտանես ձևով, ոմանք էլ համարում են միայն Ուռհայեցի: 1341 թ. ներսես Պալենցը լատիներեն տառադարձութիւնով հիշում է Octavensis, Toctanensis, Occenensis ևռանուհ պարբերությունը, ուր հայագետ Հ. Ս. Անասյանի ճշգրտամբ խոսքը Ուխտանեսի «Պատմութեանն» է վերաբերում¹³: Պատմիչը դարձյալ միայն Ուխտանես ձևով է հիշվում նաեւ Հովհան Դամասկացուն վերագրված թղթի հայ-հոռոմ մեկնիչի կողմից¹⁴: Դարձյալ իբրեւ միայն Ուխտանես է հիշվում XVII դարին վերաբերող երկու մատենագիտական ցանկերում՝ Մաշտոցի անվան Մատենադարանում եղող «Այս են պատմագիրք ամենայն»¹⁵ և Վարդան Բաղիշեցու կազմած «Պատմագիրք Հայոց» ցուցակներում¹⁶: Այնինչ Ուխտանեսին միայն իբրեւ Ուռհայի թեմակալ են ճանաչում XVIII դարի մեր բոլոր մատենագիրները, ինչպես՝ Ղազար Զահկեցին¹⁷, Եսայի Հասան-Ջալալյանը¹⁸, Պետրոս Զուղայեցի Մարտիկենցը (1772 թ. տեղեկացրել է Միքայել Չամչյանին)¹⁹, Միքայել Չամչյանը իր «Պատմութիւն Հայոցում»²⁰, 1797 թ. դարձյալ Չամչյանը՝ Հարություն Սահակյան-Զուղայեցուն գրած թղթում, երբ Վենետիկի մատենադարանում չգտնվող մատենագիրների երկերն է թվում²¹ և, վերջապես, Մադրասում հրատարակվող հայերեն անդրանիկ պարբերականում՝ «Ազդարարում» Հակոբ Այուբյանցի հրատարակած մատենագիտական ցուցակում²²:

Ամբողջ XIX դարում ճիգեր են թափվում Ուխտանեսի երկի հրատարակության ուղղությամբ: Ամերիկահայ հայագետ հանգուցյալ Հարություն Քյուրտյանի արխիվում էր պահվում Գրիգոր Փեշտիմալճյանի մի նամակը՝ գրված Կ. Պոլսից XIX դարի սկզբներին, որով նա ցանկություն էր հայտնում դժվարագյուտ մատյաններից «Ուխտանես պատմագիրք» ընդօրինակելու և

13 Հ. Անասյան, Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ, Վենետիկ, 1969, էջ 36:

14 «Լոյս», Կ. Պոլիս, 1906, էջ 355:

15 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 126, էջ 255բ—256ա, հմմտ. Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., Ա, Երևան, 1959, էջ ԼԻ:

16 Ն. Ակիսյան, Վարդան վ. Բաղիշեցի առաջնորդ Ամիրտոյի վանքին, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1952, էջ 57:

17 «Դիրք աստուածարանական, որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու Ըահկեցոյ», Կ. Պոլիս, 1735, էջ 57:

18 «Պատմութիւն կամ Յիշատակ... կաթողիկոսէն Աղուանից ի Տէր Եսայեայ Հասան Զալալեանդ», Շուշի, 1839, էջ Կ:

19 Ղևոնդ Տայան, Մայր դիւան Մխիթարեանց Վենետիկ ի Ս. Ղազար, 1702—1773, Վենետիկ, 1930, էջ 278—279:

20 Միքայել Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 18:

21 «Բազմավեպ», Վենետիկ, 1926, էջ 301—302:

22 «Ազդարար», Ադամ ամսոյ, 1795 (№ 8):

իրեն ուղարկելու մասին՝ հետագայում այն տպագրելու համար։ Քյուրտյանը կարծում էր, որ հիշյալ նամակը Երուսաղեմի մատենադարանին է ուղղված և այնպես էլ պետք է պահված լիներ Ուխտանեսուի ձեռագիրը²³։ Սակայն մեր տեղեկությունների համաձայն Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանում այժմ Ուխտանեսուից և ոչ մի ձեռագիր չկա։

Առաջին անգամ Ուխտանեսուից մի հատված, որը վերաբերում է Հեղինե թագուհու կողմից Քրիստոսի խաչի գյուտին, լույս է ընծայել Մսեր Մսերյանը Մոսկվայում 1860 թ.²⁴։ Այստեղ հրատարակիչը պատմիչին հիշատակել է սոսկ Ուխտանեսու ձևով։ Ֆրանսիացի հայագետ Բրոսեն բազմիցս անդրադարձել է Ուխտանեսուն և նրա երկին²⁵։ Դեռևս 1840 թ. ուսերեն և ֆրանսերեն լեզուներով իր հրատարակած էջմիածնի մատենադարանի ձեռագրացուցակում հիշատակում է մեր պատմիչին դարձյալ Ուխտանեսու եպիսկոպոս ձևով, սակայն տողատակին նշում է նաև, որ այն Չամչյանին ծանոթ է իբրև Ուխտանեսու Ուռնայի եպիսկոպոս։ Մ. Բրոսեն ձեռքի տակ չի ունեցել պատմագրի մայր ձեռագիրը և նրա մասին տեղեկությունները ստիպված է եղել քաղել Կիրակոս Գանձակեցու «Պատմությունից»²⁶։ Միայն 1871 թ., երբ նույն Բրոսեն Կիրակոս Գանձակեցու «Պատմությանն» առնթեր հրատարակում է նաև Ուխտանեսուի երկի ֆրանսերեն թարգմանությունը, իր գործը վերնադրում է «Oukhtanes d'Ourha X^es.», այսինքն «Ուխտանեսու Ուռնայի, X դար»²⁷։ Իհարկե, այս դարձանալի չէր, քանի որ նրանից առաջ, 1853 թ. հրատարակված էջմիածնի ձեռագրաց մայր ցուցակում, որը հայտնի է Կարենյան անունով, 1673 համարի տակ նշված է «Ուխտանեսու, եպիսկոպոս Ուռնայեցու, Պատմութիւն»²⁸։

Այսպիսով, վերևում ասվածներից կարելի է հետևել, որ միջնադարյան սկզբնաղբյուրներում և տպագիր գրականության մեջ Ուխտանեսու հայտնի է եղել մերթ Ուռնայեցի ու Սեբաստացի, մերթ՝ միայն Ուխտանեսու անվանաձևով։ Այս հարցի շուրջ ստեղծված անորոշությանը վերջ տալու և ճշգրիտ մի եզրահանգման հասնելու նպատակով մեզ այժմ մնում է զբաղվել Ուխտանեսուի «Պատմութեան» ներկայումս Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվող մայր ձեռագրի, ինչպես նաև այս վերջինիս հիման վրա կատարված միակ հրատարակության մանրազնին ուսումնասիրությամբ։

²³ Քյուրտյանի անտիպ հոդվածը մեր արխիվում։ Ս. Վելի կրճատ տե՛ս Բ ա բ գ ե ն Ա թ ու ա կ ի ց կ ա թ ո ղ ի կ ո ս, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիո Աղգային Մատենադարանի Հայոց, Անթիլիաս, 1961, էջ 768—769։

²⁴ «Ճոռաքաղ», Մոսկվա, 1860, № 6, էջ 89—90։

²⁵ M. Brosset, Histoire de la scission religieuse entre les géorgiens et les arméniens depuis la fin du VI^e siècle. Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie..., St. Petersbourg, 1851, էջ 107—125, ն ու յ ն ի՝ Examen d'un passage de l'historien arménien Oukhtanès relatif à la prétendue conquête „de l'Ibérie“ par Nabuchodonosor, „Mélanges Asiatiques“, t. V (1868), էջ 742—760, ն ու յ ն ի՝ Etudes sur l'historien arménien Oukhtanès X^e siècle, „Mélanges Asiatiques“, t. VI, 1868, էջ 13—89,

²⁶ Каталог книгм Эчмиадзинской библиотеки, изданный г. Броссе, СПб., 1840. Catalogue de la Bibliothèque d'Édchmiadzin, publié par M. Brosset..., St. Petersbourg, 1840, էջ 83.

²⁷ Deux historiens Arméniens Kiracos de Gantzac, XIII^es., Histoire d'Arménie, Oukhtanès d'Ourha X^es.

²⁸ «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյն Աթոռոյն էջմիածնի», Թիֆլիս, 1863։

Որ Ուխտանեսը իսկապես Սեբաստիայի եպիսկոպոս է եղել, ապացուցվում է նրա մայր ձեռագրի սկզբին գրված հետևյալ խորագրով. «ՉՊատմութիւն յերիս հատուածս զոր ասացեալ է Տեառն Ուխտանիսի Սե (ընդգծումը մերն է Ս. Ք.) եպիսկոպոսի, ի խնդրոյ հօրն Անանիայի նարեկայ վանաց առաջնորդի և նախաշար վարդապետի»²⁹։ Այստեղ անցողակի նշենք նաև, որ սույն ձեռագրի կազմի առաջին փեղկի ներքին զարդադաշ կտորի վրա, նոր գրով, երևում է փակցված հետևյալ հիշատակագրությունը. «Ուխտանէս եպիսկոպոս Ուոհայեցոյ (ընդգծումը մերն է—Ս. Ք.) Պատմութիւն քառածաւալ, բոլորադիր, գրեալ ի թղթի, ունի զյիշատակարան ի թ[վին] Հ[այոց] ՌՃԺԲ, ի թվին փրկչին 1663»³⁰։ Սակայն նշված հիշատակագրությունը այժմ ձեռագրում չի գտնվում։ Անշուշտ այն ընկած պետք է լիներ նախքան Կարենյան ցուցակի (1863) և Ուխտանեսի «Պատմութեան» հրատարակումը (1871 թ.), քանի որ նրա գոյության մասին ոչ մի ականարկ չկա հիշյալ հրատարակություններում։ Ահա Ուխտանեսի մայր ձեռագրի խորագրի վրա եղող Սե տառաշարքն է, որ Ուխտանեսի «Պատմութեան» հրատարակչի կողմից վերծանվել է, ըստ մեր կարծիքի, միանգամայն ճիշտ կերպով՝ «Տեառն Ուխտանիսի Սե[րաստացոց] եպիսկոպոսի...»³¹։

Սույն բացահայտումներից հետո բնականորեն հարց է առաջանում, թե ինչո՞ւ Մսեր Մսերյանը և ապա Մարի Բրոսեն սույն պատմիչին միշտ հիշատակել են իբրև Ուխտանես։ Եվ դարձյալ՝ ինչո՞ւ ավելի ուշ, ինչպես վերևում նշվեց, Ուխտանեսի բնագրի ֆրանսերեն թարգմանության ընթացքում նույն Բրոսեն Ուխտանեսին անվանեց Ուոհայի եպիսկոպոս։ Ն. Ակինյանը, նկատի ունենալով այս պարագան, իր ժամանակին փորձել էր պատասխանել, գրելով հետևյալը. «Չենք գիտեր, թե ինչ հիմամբ Կիրակոսի վկայության ավելի ծանրակշռություն տված է Բրոսեն, որուն համեմատ խորագրած է յուր թարգմանությունն ալ. «Oukhtanes d'Ourha», համեմայն դեպս եթե հ. Ալիշանի հետ վերջին ձևս «գուցե սխալմամբ գրչի» ալ ենթադրենք, խնդրական կետ մը ելլմանա միշտ այս Ուխտանեսի այդքան մութ կենսագրության մեջ»³²։

Իրականում հարցիս պատասխանը պետք է փնտրել իրենց ժամանակին թե՛ Մսերյանի և թե՛ Բրոսեի կողմից օգտագործված Ուխտանեսի մայր ձեռագրից կատարված ընդօրինակության մեջ, որն այժմ պահվում է Լենինգրադում։ Մեր կողմից այդ ձեռագիր ընդօրինակության ուսումնասիրումը տեղում ցույց տվեց, որ այն արտագրվել է 1847 թ. Հովհաննես Շահաթունյանի կարգադրությամբ՝ էջմիածնի մատենադարանում պահվող Ուխտանեսի մայր ձեռագրից և ապա ուղարկվել Մարի Բրոսեին³³։ Այստեղ ուշադրության արժանին այն է, որ ընդօրինակողը Ուխտանեսի «Պատմութեան» խորագրից օտարել է մայր ձեռագրում առկա Սե-ն, այսինքն, ինչպես նշեցինք, հետագայում տպու-

²⁹ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N° 1774, էջ 68ա։ Մայր ձեռագիր ասելով մենք չենք հասկանում Ուխտանեսի ինքնաձեռագիրը, որը մեղ չի հասել, այլ այն օրինակը, որը, նախ էջմիածնի, իսկ այժմ էլ Մաշտոցի անվ. Մատենադարանում է պահվում (N° 1774), քանի որ վերջինից են կատարվել Մատենադարանում մեկ այլ, ինչպես և Լենինգրադում, Փարիզում և Վենետիկում պահվող բոլոր ընդօրինակությունները։

³⁰ Նույն տեղում։

³¹ Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Առաջարան, էջ Ա-Բ։

³² Ն. Ակինյան, Կյուրիոն կաթողիկոս Վրաց, էջ 54—55։

³³ Рукописный отдел Ин-та востоковедения АН СССР (Ленинград), арм. С—10։

գրում ճիշտ կերպով Սե[բաստացուց] ընթերցված բառը: Ահա այդ պատճառով էլ և՛ Մսերյանը, և՛ Բրոսեն՝ իրենց ձեռքի տակ եղած օրինակում շտեմարկում Սե հապավումը, թե՛ առաջինը իր հրատարակած հատվածում և թե՛ երկրորդը իր ուսումնասիրություններում հնարավորություն չեն ունեցել Ուխտանեսին կապելու որևէ վայրի հետ և նրան անվանել են սոսկ «Ուխտանես եպիսկոպոս»: Սակայն երբ Բրոսեն լույս ընծայեց Ուխտանեսի ֆրանսերեն թարգմանությունը, ապա նա այստեղ Ուխտանեսի անվանը կցեց նաև «Ուռհայի» մականունը, մի բան, որն ինչպես տեսանք իսպառ բացակայում էր նույն պատմիչի մասին իր նախապես հրատարակած բոլոր ուսումնասիրություններում: Պատասխանը, կարծում ենք, շատ պարզ է: Նախ՝ դեռ լույս չէր տեսել Ուխտանեսի «Պատմութեան» հայերեն բնագիրը, որպեսզի ինքը կողմնորոշում ունենար մայր ձեռագրից եկող «Սեբաստացուց» անվանաձևի մասին, երկրորդ՝ իր ընդօրինակությունը, ինչպես տեսանք, այս մասին ոչինչ չունեցի իրեն հուշող, երրորդ՝ Բրոսեն Ուխտանեսի ֆրանսերեն իր թարգմանության տպագրությունը կցել էր Կիրակոս Դանձակեցու դարձյալ իր կողմից կատարված ֆրանսերեն թարգմանությանը, այսինքն՝ երկու պատմիչներն էլ լույս էին տեսնում մի գրքում, իսկ Գանձակեցին, ինչպես նշվեց, Ուխտանեսին հիշատակում էր իբրև Ուռհայի եպիսկոպոս և, վերջապես, չորրորդ՝ Կարենյան ցուցակը (լույս տեսած մի քանի տարի առաջ) նրան համարել էր Ուռհայեցի: Ահա այս բոլորից հետո Բրոսեի համար դժվար չէր իր երկը վերնագրել «Oukhtanes d'Ourha», այսինքն՝ «Ուխտանես Ուռհայի»: Այստեղից էլ դժվար չէ նկատել այն պարագան, որ Բրոսեից հետո ասպարեզ մտնող օտար հայագետների ճնշող մասս ստիպվեց որդեգրել նրա հիշյալ տեսակետը:

1871 թ. Ուխտանեսի «Պատմութեան» միակ հրատարակությունը ևս այս հարցում չկարողացավ կողմնորոշել հայագետներին: Նոր և անգամ նորագույն մեր պատմագրության մեջ շարունակվել և այժմ էլ շարունակվում է պահպանվել միջնադարին հատուկ նույն անորոշությունը: Մեր պատմիչին միայն իբրև Ուխտանես է հիշել հայագետների պատկառելի մի թիվ³⁴: Դրա հիմնական պատճառը մեր կարծիքով պետք է փնտրել Ուխտանեսի «Պատմութեան» միակ հրատարակության մեջ: Անհայտ հրատարակիչը իբրև գրքի խորագիր է ընտրել միայն պատմիչի մայր ձեռագրի կրճատ վերնագիրը. «Ուխտանես եպիսկոպոս, հատուած...», այնինչ ընդարձակ խորագիրը, որը դարձյալ ժամանակակից է երկի գրչությանը և ուր բացահայտվում է նաև Ուխտանեսի Սեբաստացուց եպիսկոպոս լինելու հանգամանքը, բերվել է գրքի առաջաբանում: Ուսումնասիրողների մեծ մասը, հաճախ շնկատելով առաջաբանում բերված ընդարձակ խորագիրը, բավարարվել է հիշատակելով միայն գրքի շապկի վրա եղածը:

34 Դեռևս XIX դարի 30—60-ական թթ. միայն Ուխտանես ևն հիշել Մ. Վ. Թեոփիլյանցը, Բ. Պատկանյանը, Հ. Շահխաթունյանցը և Մ. Սալլանթյանը, իսկ ավելի նոր օրերում՝ Գ. Տեր-Մկրտչյանը (Միաբան), Ն. Ազոնցը, Հ. Մանուկյանը, Վ. Փափագյանը, Լեոն, Ստ. Մալխասյանցը, Գ. Հովսեփյանցը, Կ. Տեր-Մկրտչյանը, Ա. Ալպոյաճյանը, Հ. Անասյանը, Բ. Առաքելյանը, Հ. Հարությունյանը, Ս. Պողոսյանը, Հր. Պասմաճյանը, Ա. Անդրեասյանը, Հ. Պետրոսյանը, Մ. Չավարյանը, Մաշտոցի անվ. Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակի կազմողները, Ս. Մելիք-Բախշյանը և ուրիշներ:

Ուխտանեսին Սեբաստիայի եպիսկոպոս է համարել Ղ. Ալիշանը: Դեռևս Վարդան Արևելցու «Պատմութեան» հրատարակության առթիվ 1862 թ. նկատի ունենալով մատենագրի այն տողերը, որոնք վերաբերում էին Ուխտանեսի կողմից Քառասուն մանկանց տոնը հաստատելուն, տողատակին տվել էր հետևյալ ծանոթությունը. «Այս է եպիսկոպոսն Սեբաստիոյ և պատմիչն, յորմէ առնու մերս և յիշէ զդէպքս»³⁵: Հետագայում, երբ արդեն հրատարակվել էին Ուխտանեսի ֆրանսերեն թարգմանությունն ու հայերեն բնագիրը, Ալիշանը, անշուշտ նկատի ունենալով այդ երկու հրատարակություններում առկա երկու տարբեր կարծիքները, իր «Հայապատումի» առաջին մասում, «Ցանկ պատմագրացն Հայոց»-ից վերցնելով, Ուխտանեսին նշում է իբրև Ուռհայի եպիսկոպոս³⁶. Բայց նույն գրքի հետագա մասում այնուամենայնիվ գրել է հետևյալը. «Աստիճանաւ եպիսկոպոս էր Սեբաստիոյ, միայն Կիրակոս Ուռհայի եպիսկոպոս կ'ըսէ, գուցէ սխալմամբ գրչի: Սեբաստիո եպիսկոպոս ըլլալն վկայվի թէ՛ այս քաղքին հռչակաւոր պաշտպանաց՝ Ս. Քառասնից տօնը փառաւորելուն առթիւ և թէ՛ այն կողմանց ծաղր կամ ծայդ կոչված ազգին պատմութիւնը գրելուն»³⁷: Այս տեսակետը պաշտպանել է հայագետների մի մեծ խումբ³⁸: Ինչ վերաբերում է ծագերի երկիրը Սեբաստիայի հետ կապելու հարցին, ապա այս խնդիրը մնում է հետաքննելի և այլ առիթով ուսումնասիրելու արժանի:

Սակայն այս բոլորից հետո դեռևս գտնվել են և շարունակում են գտնվել Ուխտանեսին Ուռհայի եպիսկոպոս կամ Ուռհայեցի համարողներ³⁹:

Այս երեք տարակարծություններից բացի կա նաև շորրորդը, որը առանձին կողմնորոշում չի կարելի անվանել, քանի որ այն վերջին երկու կարծիքների զուգորդման արդյունք է: Սրա կողմնակիցները զգուշաբար վկայակոչում են թե՛ Ուռհայի և թե՛ Սեբաստիայի եպիսկոպոս լինելու վերաբերյալ միջնադարյան վերոհիշյալ պատմիչների կարծիքները⁴⁰:

Այս հարցում բոլորովին այլ ճանապարհ է գտնում ֆրանսիացի հայագետ Պ. Պետերսը: Նա փաստորեն ժխտում է Ուխտանեսի ինչպես Ուռհայի, այնպես էլ Սեբաստիայի թեմակալ լինելու հանգամանքը: Թեև նա սկզբում նկատում է, որ Ուխտանեսը իր երկով ավելի կապված է Սեբաստիայի հետ, այնուամենայնիվ, ընկնելով ծայրահեղության մեջ, կարծում է, որ պատմությունից դատելով, նա Սեբաստիայի ներսում չի նստած, այլ դրսից է միայն խոսում⁴¹: Էլ չենք խոսում Պետերսի այն հախուռն կարծիքների մասին, երբ նկատի առնելով այն հանգամանքը, որ X—XII դդ. հայ պատմիչները չեն հիշում Ուխ-

35 «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», էջ 42, ծան. 2:

36 Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, Վենետիկ, 1901, էջ 13:

37 Նույն տեղում, էջ 85—87:

38 Այդ կարծիքին են Ալ. Երիցյանը, Եղ. Դուրյանը, Ա. Զամինյանը, Մ. Աբեղյանը, Հ. Գալանձյանը, Հ. Աստուրյանը, Մ. Մկրյանը և ուրիշներ:

39 Նման կարծիքի են Ք. Պատկանյանը, Ն. Զիվանյանը, գերմանացի հայագետ Հ. Գելցերը, ֆրանսիացի հայագետներ Ֆր. Մակլերը, Ժակ դը Մորդանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Արամ Սահակյանը, Ա. Թովմասյանը և ուրիշներ:

40 Նման դիրքում է կանգնած հայագետների մի ամբողջ խումբ՝ Գ. Զարրհանալյան, Կոնի-բիր, Մ. Օրմանյան, Ն. Ակինյան, Հր. Աճառյան, Կ. Քիսարյան, Ն. Պողարյան և ուրիշներ:

41 P. Peeters, Sante Sousanik martyre en Armeno-Georgie, „Analecta Bollandiana“, t. LIII—IV, Bruxelles, 1935, էջ 258:

տանեսին, կասկածի տակ է դնում նրա ապրած ժամանակաշրջանը և անգամ նրա մատչանի վավերականութիւնը⁴²։ Զ. Ն. Ալեքսիձեն, որ հայերեն բնագրով և վրացերեն թարգմանությամբ հրատարակել է Ռւստանեսի «Պատմութեան» երկրորդ մասը, իր ուսումնասիրության բաժնում գրել է. «Որոշակի հավանականությամբ կարելի է ենթադրել, որ մինչ երկի գրելը (կամ հետո) Ռւստանեսը գրավում էր Սեբաստիայի եպիսկոպոսի աթոռը կարճ ժամանակով»⁴³։ Նրա կարծիքով Ռւստանեսը ոչ էլ Ուոհան է անուշադրության մատնում⁴⁴։ Իրականում, սակայն, Ռւստանեսի կողմից Ուոհայի հիշատակութիւնը մեջբերում է նախորդ աղբյուրից և ոչ թե իր խոսքը այդ քաղաքի մասին։ Այդ վերաբերում է Ռւստանեսի լեզվին, որը վերնագրված է. «Գնալն Թագէոսի առ Աբգար և քարոզել քաղաքին Ուոհայի»⁴⁵։ Սա առկա է նաև նրան հաջորդող մեր այլ պատմիչների մոտ, սակայն դարձյալ նրանց բնավ չի կապում անձնապես Ուոհայի հետ։

Մասնավորելով մեր խոսքը, պետք է նկատել, որ կան նաև այլ կովաններ, որոնք գալիս են հաստատելու, թե Ռւստանեսը իսկապես Սեբաստիայի թեմակալն է եղել։ Ռւստանեսի «Պատմութեան» առաջին հատվածի ԿԹ գլխում, որը խորագրված է՝ «Դարձեալ ի նոյն խորհուրդ յաղագս սրբոյն Գրիգորի երանելոյն ի ձեռնադրութիւն Հայրապետութեանս», պատմիչը նկարագրում է, թե ինչպես Գրիգոր Լուսավորիչը, իբրև «Հայրապետ Հայոց Մեծաց» ձեռնադրվելուց հետո վերադարձին իր շքախմբով կանգ է առել Սեբաստիա քաղաքում և ուր որոշ ժամանակ մնալով՝ հիմքերն է դրել մի եկեղեցու, որը և հավատարիմ մարդիկ կառուցել են Գրիգոր Լուսավորչի հրամանով և անվանել Ս. Գրիգորի անունով։ Ինչպես երևում է, խոսքը վերաբերում է Սեբաստիա քաղաքի մոտ գտնվող Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքին։ Սույն պարբերութիւնից ի հայտ է գալիս, որ Ռւստանեսը սկզբում հետևել է Ագաթանգեղոսի «Պատմութեան» աչյն տվյալին, ըստ որի Գրիգոր Լուսավորիչը իր վերադարձին եղել է նաև Սեբաստիայում⁴⁶, մի փաստ, որ օգտագործել են նաև պատմահայր Մովսես Խորենացին⁴⁷, Զենոբ Գլակը⁴⁸ և ուրիշները։ Սակայն վերոհիշյալ վանքի կառուցման մասին ոչինչ չկա Ագաթանգեղոսի և մեր մյուս պատմիչների մոտ և, անշուշտ, Ռւստանեսը նրա կառուցման վերաբերյալ նյութեր պետք է որ քաղած լիներ տեղում՝ սեբաստացիների պատմաձևերից, երբ ինքն այդ քաղաքի եպիսկոպոսն էր։ Սակայն Ռւստանեսի «Պատմութեան» վերոհիշյալ գլխում ամենից ավելի ուշագրավը և կարևորն այն ականատեսի վերաբերմունքն է, որ ցույց է տալիս նա, երբ գրում է, որ հիշյալ տաճարը «դեռևս կայ լեզր ի աղափին»⁴⁹, այսինքն Գրիգոր Լուսավորչի այդ վանքը դեռևս կա, գոյութիւն ունի Սեբաստիա քաղաքի մոտ։ Սեբաստիայի հայկական հինավուրց ճարտա-

42 Նույն տեղում, էջ 259։

43 ՊԵՏԵՐՍ, ՌԵՆԴՐՈՍ..., էջ 234—235։

44 Նույն տեղում, էջ 226։

45 Ռւստանես, էջ 48—49։

46 Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1835, էջ 601։

47 «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1827, էջ 329։

48 Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատութեամբ և առաջաբանով Աշ. Արրաճամյանի, Երևան, 1941, էջ 18։

49 Ռւստանես, էջ 99։

րապետական այդ կոթողն էր, որ 1593 թ. թուրքերի կողմից մզկիթի վերածվեց, ինչպես այդ մասին գրել է Հովհաննես Սեբաստացին⁵⁰։ Սեբաստիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի վախճանի վերաբերյալ մեզ է հասել մի ավանդույթ, որ պատմվում է, որ թուրքերի բռնատիրության շրջանում, երբ այնտեղ հայերը պատարագ էին մատուցում, մի մուլա, մտնելով եկեղեցի, բարձրանում է խորանը և հայտարարում, որ այլևս քրիստոնյաները գործ չունեն այդտեղ, քանի որ եկեղեցին մզկիթի է վերածվել⁵¹։

Ուխտանես պատմիչի՝ իբրև Սեբաստիայի եպիսկոպոս լինելու օգտին է խոսում նաև նրա «Պատմութեան» առաջին հատվածի ԿԱ զխի հետազոտումը, որ նա, գրելով Սեբաստիայի Քառասուն մանկանց վկայաբանության մասին, նշում է, որ ինքն ուսումնասիրել է նրանց վարքը, կարողացել է պարզել նրանց նահատակության օրը և պատվիրել ամեն տարի տվյալ օրը կատարել այդ տոնը։ Այստեղ ընդգծելու արժանի է այն պարագան, որ Ուխտանեսի «Պատմութեան» կարևորագույն մի պարբերություն, որն անվիճելիորեն ապացուցում է, թե Ուխտանեսը Սեբաստիայի թեմի առաջնորդն է եղել, դուրս էր մնացել պատմիչի միակ հրատարակությունից և միայն վերջերս՝ Ուխտանեսի մայր ձեռագիրը նրա տպագրի հետ համեմատելու մեր աշխատանքների ընթացքում հաջողվեց հայտնաբերել։ Ահա Ուխտանեսի երկի այն հատվածը, որ ընդգծել ենք տպագրից դուրս մնացած մասը. «Եւ էր օրն՝ յորում հանին զնոսա ի բնակութենէ իւրեանց տասն և հինգ Արե ամսոյ, զոր մեր ոչ վարկապարգի ինչ՝ այլ ստուգիւ քննեալ յուսումնասիրաց ոմանց՝ որք էին մարդասէրք և աստուածասէրք. եւ վասն այնորիկ կարգեցաք մեք զօրն այն տօն սրբոց Քառասնիցն և սահմանեցաք մերոյ վիճակելոցն տօնել ամ յամէ անխափան ի փառս Աստուծոյ»⁵²։

Այսպիսով Ուխտանեսը նշում է, որ ինքը ոչ միայն կարգել է այս տոնը, այլև իր թեմի հոգևորականությանը սահմանել է ամեն տարի անխափան կերպով տոնել։ Ուխտանեսը կարգադրություն է արել իր թեմի «վիճակելոց»,

⁵⁰ Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Ս Ե Բ Ա Ս Տ Ա Գ Յ Ի, Պատմութիւն Սեբաստիոյ, աշխատասիրությամբ Բ. Լ. Զուգասոյանի, Երևան, 1974, էջ 63—64։ Տե՛ս նաև Ս. Է. Վրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ. Բ, գիրք Ա, էջ 113։

⁵¹ Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 245։ Նշենք նաև, որ Սեբաստիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքը եղել է հայ գրչության կարևոր կենտրոններից մեկը։ Այդ վանքում գրված հնագույն գրչագիրը 1193 թ. մի Ավետարան է, որը մինչև Մեծ եղևոնը պահվել է Վասպուրականի Կարփել զյուղի եկեղեցում։ Ներկայումս Երևանի Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվող № 987 ձեռագիրը ևս գրված է նույն վանքում 1211 թ. և դարձյալ Ավետարան է։ Դարձյալ Երևանի Մատենադարանում է պահվում նաև նույն վանքում 1239—1240 թթ. գրված ձեռագիր մի ժողովածու (№ 7574)։ Այս վանքում գրված մեզ հայտնի ամենավերջին ձեռագիրը ժամագիրք է՝ ընդօրինակված Մխիթար զպրի կողմից նույն 1593 թ. դժբախտ տարին։ Այդ ձեռագիրը այժմ պահվում է Վիեննայի Մխիթարյան Մատենադարանում (№ 196)։ Ինչպես ցույց են տալիս հիշյալ փաստերը, հայկական այդ վանքը իբրև գրչության կենտրոն մինչև իր վերջին շունչը իր նպաստն է բերել հայ գրչությանը, հետևաբար և հայ մշակույթի պատմությանը։ 1593 թ. հետո հայկական այդ սրբավայրը այլևս չի հիշվում (Ս. Քուլանջյան, Սեբաստիայի գավառի գրչության կենտրոնները։ Սեբաստիայի գավառի հայերեն ձեռագրաց հիշատակարաններ, անտիպ)։

⁵² Ո Ւ խ տ ա ն ե ս, էջ 87։ Ընդգծված պարբերությունը, որ չկա տպագրում, տե՛ս Մաշտոցի չանվ. Մատենադարան, ձեռ. № 1774, էջ 128բ—129ա։

այսինքն՝ իր պաշտոնակից հոգևորականությանը, ամեն տարի նույն օրը հիշյալ սրբերի տոներ աշոտեղ տոնելու մասին:

Եվ, վերջապես, Սեբաստիայի եպիսկոպոս լինելը մի անգամ ևս հաստատող կարևոր փաստ է նաև վերջերս մեզ հայտնի դարձած՝ Վանական վարդապետի (XII—XIII դդ.) «Հարցմանց գրքում» (մեղ է հասել Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանում պահվող և 1273 թ. Գետկավանքում գրված մի գրչագրով) առկա հետևյալ հարց ու պատասխանը, ուր խնդրո առարկա է դարձել Ռւստանեսի անձնավորությունը: Այսպես, Վանականի նշված աշխատությունում հարց է տրվում այն մասին, թե «ո՞վ է Ռւստանէսն, որ ղկայսերքն և ղպատմութիւնն է արարեալ», որին նա պատասխանում է. «Նարեկացոյն վարդապետին Անանիայի աշակերտ է, եպիսկոպոս Աւաստոյ»⁵³:

Մեր մեջ բերած փաստերը խմբովին վկայում են, որ X դարի պատմիչ Ռւստանեսը անվիճելիորեն եղել է Սեբաստիայի եպիսկոպոսը կամ թեմակալ առաջնորդը:

Ինչ վերաբերում է Կիրակոս Գանձակեցու կողմից Ռւստանեսին Ուռհայի եպիսկոպոս համարելու հարցին, որը ինչպես միջնադարում, այնպես էլ մինչև օրս իր հետևորդներն է ունեցել մեր մատենագրության և գիտական գրականության մեջ, ապա առավելագույն ղեկքում պետք է ենթադրել, որ դա գուցե արձագանքը լինի այն բանի, որ մեր պատմիչը Սեբաստիայի թեմակալ լինելուց և իր մատյանը գրելուց հետո կարճ ժամանակով եղել էր նաև Ուռհայում, մի բան, սակայն, որը ոչ մի այլ աղբյուրի միջոցով չի հաստատվում:

Այժմ քննելի է մնում այն խնդրի ճշտումը, թե ե՞րբ է եղել Ռւստանեսը Սեբաստիայի թեմակալ առաջնորդը: Ն. Ակինյանը դիտել է տալիս, որ Ռւստանեսը «Սեբաստիո աթոռին վրա եպիսկոպոս ճանչնալու ալ դժվարություն կա. դարու Երկրորդ կեսին (համի 986), երբ կը պատմագրի Ռւստանես, Ասողկեն հառաջ կը հիշվի Սեբաստիո եպիսկոպոս Սիոն անվամբ, որ տեղվույն հույն մետրապոլիտեն բռնադատված՝ ընդգրկած է հունադավանությունն»⁵⁴: Ն. Ակինյանը միաժամանակ կարծում է, որ Սիոնից հետո հնարավոր եղավ, որ Ռւստանեսը դառնա Սեբաստիայի եպիսկոպոս: Նկատի ունենալով հույն եկեղեցու կողմից Սեբաստիայի, Մելիտինեի և այլ վայրերի հայերի նկատմամբ հարուցված կրոնական հալածանքը, Ն. Ակինյանը նշում է, որ «կովան է, որ մինչև այդ թվականը (986) ղլանալու Ռւստանեսի Սեբաստիո աթոռը: Թերևս կաթողիկոս խաչիկը ղեկքեն հետո պաշտոնանկ ընելով զՍիոն, Ռւստանեսի հանձնած ըլլա այդ թեմն ենթադրելով, թե ճշմարիտ է Օրսելյանի վկայությունը»⁵⁵:

Պ. Պետերսը, անշուշտ հենվելով Ն. Ակինյանի փաստարկի վրա, միակողմանիորեն բացասում է ոչ միայն Ռւստանեսի, այլև առհասարակ հայ եպիսկոպոսության առկայության փաստը Սեբաստիայում, քանի որ, նրա ասելով, մինչև 1016 թ. տեղի հայ եկեղեցին հալածանքի էր ենթարկվել հույն եկեղեցու կողմից⁵⁶: Այս նշանակում է անտեսել Ստեփանոս Տարոնեցի Ասո-

53 Ն. Պողոսյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց, հատ. չորրորդ, Երուսաղեմ, 1969, էջ 484, ԱՆ. N° 1288:

54 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 54:

55 Նույն տեղում, էջ 52:

56 P. Peeters, նշվ. աշխ., էջ 259:

է Սեբաստիայի պատմագրքի կտգմոգ, նկարիչ, բանասեր Առաքել Պատրիկի կողմից, որը նկատի ունենալով հատկապես պատմագրքի համար մեր պատարած լրացումը՝ այդ մասին ճշտում է մտցրել Սեբաստիայի եպիսկոպոսների ցուցակին նվիրված հատվածի տողատակին⁶¹:

Ներկա հոդվածով լուծելով երկար դարեր շարունակ Ուխտանեսի պաշտոնավարության վայրի անվան խառնաշփոթը հոգուտ Սեբաստիայի եպիսկոպոս լինելու հանգամանքի, ինչպես նաև աշտելով իր թեմակալ լինելու մոտավոր թվականները, սշենք, որ այժմ հրատարակության ենք պատրաստում պատմիչի գիտահամեմատական համահավաք բնագիրը՝ կաղմած բոլոր ձեռագիր ընթերցանակությունների և տպագրի հիման վրա, ներածությամբ, անհրաժեշտ ծանոթագրություններով և երկրորդ հատվածի վերջաբանության նորագույն մասով:

УТОЧНЕНИЯ К БИОГРАФИИ ИСТОРИКА УХТАНЕСА

Кандидат историч. наук С. Э. КОЛАНДЖЯН

(Резюме)

Крайне скудны данные первоисточников по биографии историка Х в. Ухтанеса. Имеющиеся в его «Истории» автобиографические сведения опрывочны, поэтому в арменистике дискутируется вопрос, Севастия или Эдесса была местом его деятельности. Именно этим обстоятельством обусловлен тот факт, что одни Ухтанеса называют Урхаеци (Эдесским), другие—Себастаци (Севастийским). Анализ текста «Истории» и кодикологическое исследование основных рукописей показали, что Ухтанес был епархиальным епископом Севастии (970—985 гг.), а следовательно, пересмотру подлежат те разыскания, в которых этот период его биографии считался малоизвестным. Самого историка в научной литературе следует именовать Ухтанесом Себастаци (Севастийским).

Կոսի կոնդակից հետո նա նորից էր դարձել նույն թեմի եպիսկոպոս, անշուշտ նորից հայոց դավանությանը վերադառնալուց հետո: Թեև 2. Աճառյանը կարծում է, որ նա առ անձ է (տե՛ս «Անձնանունների բառարան», Դ., էջ 522, № 3 և 4):

61 «Պատմագիրք հուշամատյան Սեբաստիո և գավառի հայության», հատ. Ա, կաղմեց Առաքել Ն. Պատրիկ, Բեյրութ, 1974, էջ 84, ծան. 1: